

# ՅՈՒՅԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 264

ԱՂԹԱՐԴ

**Թերթերը՝** 80։—**Պրակները՝** 10, անկանոն, բազմաթիվ պրակներ (Ա, Բ, Գ, Է) պակասում են։ Եղած պրակներից էլ բազմաթիվ թերթեր թափվել են։ Ներկայիս պրակները հետևյալ թերթերն ունեն՝ Ե՝ 1, ԺԴ՝ 4, Ը և ԺԱ՝ 6, Զ՝ 9, Դ, Թ և Ժ՝ 10, ԺԲ և ԺԳ՝ 12 հատ։—**Մեծությունը՝** 12.1×7.9×2.6 սմ.։—**Նյութը՝** դեղնած թարակ (թ. թ. 1—51) և հատ (թ. թ. 53—80) թուղթ։—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, տեղ-տեղ կաշին մաշված է։ Կազմի առաջին երեսին սիրուն խաչ, իսկ կոնակին էլ զարդեր են նկարված, կետերով ծակծկելով կաշին։—**Պահպանակները՝** ընկել են։—**Վիճակը՝** անբավարար, սկզբից և միջից շատ թերի է։—**Գրությունը՝** միապուն։—**Դատարկ թղթերը՝** չունի։—**Տողերը՝** 12—13։—**Գծումները՝** առանց ճնշումի։ **Գիրը՝** բոլորգիր։—**Զարդագրությունը՝** ձեռագրի սկզբում շատ թերթեր պակաս լինելուն, ձեռագրի զարդագրության մեծ մասը կորել է։ Ձեռագիրը նախկինում ունեցել է շատ գեղեցիկ զարդագրություն, որն երևում է պահպանված փոքր մասից։ Ձեռագրում այժմ կան շատ գեղեցիկ 8 հատ լուսանցազարդեր, 8 հատ զարդագրեր և 2 հատ էլ գլխազարդեր։ Սրանք բոլորը գտնվում են 1—27 թերթերում։ Ձեռագրի վերջին մասում զարդագրություն չկա, չնայած երկուական այն զարդագրերն ու լուսանցազարդերը (թ. թ. 64բ և 72բ) որոնք նույն ոճով չեն նկարված։—**Գրիչը՝** Հայրապետ քահանա։—**Պատվիրատուն՝** Խեր։—**Ծաղկողը՝** անհայտ։—**Ժամանակը՝** 1626 թ.։—**Վայրը՝** շատ հավանաբար Ջուղա։—**Ծանոթություն՝** սույն փոքրիկ ձեռագիրը ստացված է նվեր 1964 թ. օգոստոս ամսին պարսկահայ մի հավատացյալ տուրիստ տիկնոջ կողմից։

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 2ա.—...Բարեխաւսութեամբ սրբոցս եղիցի բըժշկութիւն ծառայիցս Աստուծոյ Խէրէ, Սալթանաթունին, Աստուածատուրին, ամէն։

Թ. 4բ.—(Նույն անունները կրկնվում են։ Հետագայում վրան ուրիշ անուններ են գրվել)։

Թ. 7ա.—...Խէրէրն և կողակիցն Սալթայխաթունն և որդին Աստուածատուրն, ազատեա և պահեա զսուսա ի դիւականաւ չարէ։

Թ. 9բ.—...ծառայիս Աստուծոյ որոյ վերայ գիրս կենա իւր և իւր զաւակացն ամէն։

Թ. 13բ.—(Նույն անունները կրկնվում են)։

Թ. 16բ.—Արդ այս ամենայն արձակեալ և հեռացեալ եղիցի ի ծառայիցս Աստուծոյ Խէրէրին և կողակցին Սալթայխաթունին և որդւոյն Աստուածատուրին ամէն։

Թ. 18ա.—Բարեխաւսութեամբ Սրբոյն Գրիգորի Նարեկացոյն եղիցի բժշկութիւն ծառայիցս Աստուծոյ (նույն անունները կրկնվում են)։

Թ. 37ա.—Բարեխաւսութեամբ Սրբոյ Նարե (թ. 37բ) կացոյս բժշկութիւն լինի ծառայիցս Խէրէ, Սալթանաթունին, Աստուածատուրին։

Թ. 64ա.—Աղօթս այս պահապան լինի Խէրէ և իւր կողակցին Սալթայխաթունին, Աստուածատուրին, ամէն։

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի №№ Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի №№ Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի №№ Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից և 1971 թվականի № Ե-ից։

Թ. 79ա.—(Գլխավոր հիշատակարանի սկիզբը թափվել է).

...վարդապետի, ձեռամբ անարժան և սուտանուն Հայրապետ իրիցուի, որ զանունս ունիմ և զգործս ոչ, ի թվականիս հայոց ՌՀԼԴ (1626) ամին գրեցայ։ Տէր Աստուած ողորմեա զստացող սուրբ տառիս զպարոն Խէրի և կողակ(թ.79բ)իցն Սալթախաթունն և որդին Աստուածատուրն, որ ստացայ ի հալալ ընչից իւրոց, և Աստուած ողորմի ասացէք ով ընթերցողք, և Աստուած ձեզ ողորմեսցի յիր միւս անգամ գալըստեանն, ամէն, Հայր մեր։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Յակոբին և իր Ղատդամին և իր դըստերին Մարիամխանումին և յԱնային և Պէտրոսին և Մըկըրտիչին ամէն։

Khatchik Bab'oyan

Ingénieur Civil (A. I. Br.)

Գնեցի Թեհրանում 4—4—1954 թ.։

Թ. 2ա.—Յակոբին և իր կողակցին և իր դըստերին Մարիամխանումին և յԱնային և իր աղպէր Պետրոսին և Սըկըրտիչիս ամէն։

Թ. 4բ.—Յակոբին և իր կողակցին Ղատդամին։

Թ. 7ա.—(Նույն անունները կրկնվում են)։

Թ. 7բ.—Պահէն Յակոբէն և իր յաղպէր Պէտրոսէն և Մէկէկիչնէն։

Թ. 9ա.—Յակոբին և իր աղպէրըն Պէտրոսին և Մէկէդիչին և Գալուստին և իր եցիսեղին Մարիամխանումին և յԱնային և իր մէր Ղատդամին։

Թ. 13բ.—Յակոբին ...Մարիամխանումի և Անայ։

Եւ ձայն որ ասէր՝ այն է իմ որդի, իմ սիրելի ընդ որ յայնեցայ, թէ գորք ճոհեոյմն։

Թ. 16բ.—(Հակոբ, Պետրոս, Ղատդամ, Մարիամխանում և Աննա անունները կրկնվում են)։

Թ. 29բ.—(Գրչափորձ) նաև թ. թ. 31բ-ում և 47ա-ում։

Թ. 54բ.—(Մի փոքր կնիք 1.4×1.2 չափերով)։
Քրիստոսիծառայ Տէր Բղս...։

Թ. 63բ.—Khatchik Babloyan
Ingénieur Civil (A. I. Br.)
(Նույնը թ. 79ա-ում)։

Թ. 64ա.—Յակոբին և իր աղպէր Պէտրոսին և Մկէտիչին Ղատդամին, որդին Մարիամին Խանումին և յԱնային ամէն։

Թ. 65բ.—(Անընթեռնելի մի կլոր կնիք 2.2 սմ. տրամագծով) նույնը և թ. թ. 66բ, 73բ, 77բ և 78բ-ում։

Թ. 68բ.—1714 թ. մայիս 12-ին։ Հիշատակ 1714 Նշան (թ. 69ա) Ա. Գալուստիեան։

Թ. 79բ.—...որ յերկին ստեղ. սուրբ եղիցի այնոյն քո եղիցի կամք քո։

Թ. 80ա.—Ադա մայա էլ արա սավետ դոմաշ։

Թ. 80բ.—Զանբամ քաւսիան ցյոշ Տէր։
Էս ճիթուլիդ։

## № 265
## ԺԱՄԱԳԻՐՔ

**Թերթերը՝** 167։—**Պրակները՝** 23, յուրաքանչյուրը 8-ական թերթից։ Ա. պրակը պակասում է, ԻԳ՝ 3, Բ, Ե և Զ պրակները 6-ական թերթից են։—**Մեծությունը՝** 10.8×8.5×4.3 սմ.։—**Նյութը՝** դեղնած և կնդոտոտած հաստ թուղթ։—**Կազմը՝** կաշեպատ տախտակ։ Ա. երեսի կաշին պատռվել է և տախտակը ընկել։ Անցյալում երկու բռնիչներ են եղել, որոնք հետագայում ընկել են։ Կաշվի վրա ճնշումով երկու երեսներին զարդեր են նկարված։—**Պահպանակները՝** ընկել են։—**Վիճակը՝** անբավարար։ Սկզբից և վերջից թերի, միջից էլ երեք պրակներից 2-ական թերթ է պակասում։—**Գրությունը՝** միապույն։—**Դատարկ թղթեր՝** չկան։—**Տողերը՝** 13։—**Գծումները՝** ճնշումով։—**Գիրը՝** բոլորգիր։—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի շատ հասարակ 6 հատ գլխազարդեր, 2 հատ լուսանցազարդեր և 8 հատ էլ զարդագրեր։—**Գրիչը՝** Ներսես։—**Պատվիրատուն՝** անհայտ։—**Տաղկողը՝** անհայտ։—**Ժամանակը՝** ԺԸ դար։—**Վայրը՝** անհայտ։—**Տանոթություն՝** սույն ձեռագիրը ստացված է նվեր, 1964 թ. օգոստոս ամսին, պարսկահայ մի հավատացյալ տուրիստ տիկնոջ կողմից։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ժամագիրքը ամբողջությամբ գրված է հայկական խազերով։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 19բ.—Զմեղուցեալ գրչակս յիշեա ի Տէր։

Թ. 73բ.—Ով դասք լուսերամից, յերեսս անկեալ աղաչեմ յիշել յերկնաթռիչ աղօթս ձեր. զՆերս(էս) յոգնամեղ գրչակս և Աստուած ձեզ ողորմեսցի. ամէն։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 3ա.—Յակոբ։

Թ. 7ա.—Khatchik Babloyan, Ingénieur Civil (A. I. Br.)

(Նույնը և թ. թ. 76ա, 132բ և 167բ-ում)։

Թ. 48բ.—Թագաւոր, Թա(գ)ուհի, թագեր, թան։

Թ. 49ա.—Ընտրաս, ընտիկ, ընուկ, ընէց, ընցեց։

Թ. 49բ.—Էւաջ, Էնիմութ, Էթեթ, Էից, Էապ։

Թ. 50ա.—Զագարայ, Զախէ, Զանութ, զանծին։

Թ. 50բ.—Եւաջ, Եւայ, Եւիալն, Եղիայ, Եղութ։

Թ. 51ա.—Դարաչի, դանեակ, դմակ, դիրակ, դաէս։

Թ. 51բ.—Գանայ, Գալէտան, Գալուց, Գավեր, գառներ։

Թ. 52ա.—Բերան, Բարսեղ, բարի, բաբոս, բիբար, բաներ, բախեր։

Թ. 52բ.—Աղազար, ավազ, ավել, Ամիրջան։

Թ. 53ա.—Աբրամ, անպի, աշկերտ, Ավետ։

Թ. 61ա.—Իմ դասն է։

Թ. 73բ.—Գլուխն մէջ Միածնի սուրբ...

Թ. 89բ.—Զարչարեցին զսուրբ։...

Թ. 107բ.Զարչարեցին զսուրբ Գրիգորէն յրեցէր։

Թ. 125ա.—Սուրբ Գեվորքին, Սուրբ Գրիգոր Լուսաւորին:

Թ. 155բ.—Աներցին ա Ներսէս տեսայ ասաւ արն երթակ մեր տուն:

Թ. 161բ.—Ես Մկրտումս գրեցի: Այն եկեղեցի:

№ 266

ԱԻԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 291:—**Պրակները՝** 25 (22+3 պրակ սկզբում՝ Ա—1, Ա—2 և Ա—3), յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակները՝ Ա—1 և Ա—2՝ 8-ական թերթ և ԻԲ՝ 11 թերթ:—**Մեծությունը՝** 10.4×8.6×5.1 սմ.:—**Նյութը՝** երբեմն հաստ և երբեմն էլ բարակ, մաքուր սպիտակ մագաղաթ:—**Կազմը՝** կաշեպատ ստվարաթուղթ, որի առջևում և կոնակում կա մեկական արծաթյա խաչ, յուրաքանչյուրը 7-ական գամերով ամրացված կազմին: Ձեռագիրն ունի երկու սիրուն արծաթյա բռնիչներ, որոնք ամրացված են կազմին, ոյուրաքանչյուրը 4-ական գամերով:—**Պահպանակները՝** ձեռագրի սկզբում և վերջում կան մեկական հասարակ սպիտակ և մեկական գունավոր թուղթ:—**Վիճակը՝** շատ լավ, միայն կազմը անջատվել է ձեռագրից:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթերը՝** ձեռագրում կան բազմաթիվ դատարկ էջեր:—**Տողերը՝** 23:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի շատ սիրուն զարդանկարչություն: Ձեռագրի սկզբում (թ. թ. 1—16-ում) կան Հիսուսի կյանքից 16 հատ փոքրիկ սիրուն նկարներ, ապա (թ. թ. 17—26-ում) կան 10 հատ սիրուն խորաններ և համաբարբառներ: Ձեռագրում կան չորս Ավետարանիչների գեղեցիկ նկարները (թ. թ. 30բ, 104բ, 154բ և 232բ) և շատ սիրուն չորս հատ խորաններ (թ. թ. 31ա, 105ա, 155ա և 233ա): Ձեռագիրն ունի մեկական մեծ շատ սիրուն հրեշտակագիր (թ. 31ա) և թռչնագիր (թ. 233ա) և երկու հատ գազանագիր (թ. թ. 105ա և1 55ա): Այս բոլորից բացի ձեռագրում կան բազմաթիվ զարդագրեր, ձկնագրեր և թռչնագրեր, լուսանցազարդեր, գմբեթներ և խաչեր, սրբեր, մարդիկ, կենդանիներ, թռչուններ և կապիկներ, ծառեր և ծաղիկներ:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Մաթեոսի Խոջա Բարսեղ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1653 թ.:—**Վայրը՝** Կոստանդնուպոլիս:—**Ծանոթություն՝** սույն արժեքավոր ձեռագիրը նվեր է ստացված Մադրասի (Հնդկաստան) Հայ Եկեղեցուց, Կալկաթայի Հայկական Ընկերության վարչության միջոցով: Հնդկաստանից ս. Էջմիածին է բերված ուսանող Ռոմիկ Մարտինի ձեռամբ 1964 թ. սեպտեմբերի 27-ին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 290ա.—Փառք ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն: Որոյ խնամօք և ողորմութեամբ աւարտեցաւ աստուածախօս Սուրբ Աւետարանս ի գլ(թ. 290բ)բաւնչակ մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, որ այժմ ասի Ստամպոլ, ձեռամբ (անվան տեղը բաց է թողնված 12 մ. մ.) գրչի, որ և ստացաւ զսա մանուկն Խոճայ Բարսեղն յիշատակ ինքեան և ծնողացն իւրոց հօրն Հախնազարին, և մօրն Մուրվաթին, և իւր որդոցն պարոն Մինասին, Գրիգորին, Վաթանին, և դստերացն Մասփուռին, Աննային և այլ ամենայն արեան մերձաւորացն, որ և բազում թախանձանօք հայցեմ հանդիպողացդ այսմ տաւոի յիշել զվերոյգրեալ Մաթեոսի Բարսեղն, և զկողակիցն իւր զՄարիամն, և զորդին զպարոն Մինասն, և զկողակիցն զՂամպարն հանդերձ ամենայն ընտանեօքն իւրովք և որք յիշեն յիշեալ լիցին ի Քրիստոսէ ի միւս անգամ գալըստեան նորա, Ամէն:

Եղև այս ի ԹՎՆԲ (1653 թ.) թուին Յունիսի ԺԳ:

Դարձեալ յիշեցէք զԳրիգորն և զկողակիցն Բաղիշդէն և զորդիսն իւր զՆազարն և Սաֆարն, և զդստերքն իւր Ուրուֆէն, Նազլուխանն և Մարամտատիկն յիշեցէք և Աստուած ողորմի (ասացէք):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի սկզբում գտնվող պահպանակի վրա).

ՌՇԲ—1653 (Մ(եսրոպ) եպիսկոպոս, 10-2-1928 Մատրաս:

Թ. 291ա.—(Սեծատառ երկաթագրով և կարմիր թանաքով գրված է).

Սուրբ Աւետարանս լէր հրաշալի իմ գրի գրեալ է թ Տէր Աւետի, և ընծայեալ ի քաղ(աք)ի որ և Մադրաս անոն կոչի ի դուռն Սուրբ Աստուածածնի, Եկեղեցուն Սուրբ հրաշալի, ի յիշատակ անքակտելի ծնողացս իմ միշտ յիշելի, հայր իմ և եղբարք և սիրելի, որք հանդիպիք հաստ ադենն զիմօվ սրտի և տուք ողորմի, Տէր մեզ և ձեզ ողորմեսցի յաւուրս մեծի հրատրիկի, (թ. 291բ) ի թվին հազար յօթն հարուր ինսուն և հինկ յաելի (1795) բրդի ալ և Ալարէային տօմարիս ՃՁ թվին շմայ գրեցի աղարարաւ սերից տասնի, ծառայ Սիմոն Թաթէվոս:

(Վերջում կա մի անջատ թուղթ, որի վրա շղագիր գրված է հետևյալը).

Նվեր Մադրասի Հայոց եկեղեցու կողմից: Եսայի Նարտինի միջոցով, որը ս. Էջմիածին բերեց Ռոմիկ Մարտին: 27-9-1964 թ.:

№ 267

ԿՈՆԴԱԿ

**Թերթերը՝** 2:—**Պրակները՝** 1 հատ:—**Մեծությունը՝** 34.1×24.7 սմ.:—**Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** միասյուն:—**Դատարկ թղթերը՝** 2ա և 2բ:—**Տողերը՝** թ. 1ա՝ տպագիր—4 տող և ձեռագիր—24 տող, իսկ թ. 1բ՝ ձեռագիր—11 տող:—**Գծումները՝** գրված է աչքի չափով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** չունի: Կոնդակի գլխում կա միայն Կաթողիկոսական կարմիր կնիքը 2.8×2.6 սմ. չափսերով և հետևյալ գրությամբ.—«Գէորգ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց—ՌՅԺԵ—1868»: Կնիքի վերևի մասում ճառագայթ արձակող կես արեգակի մեջ նկարված է մի դրոշակ բռնած գառնուկ:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** Դևորգ

Դ կաթողիկոս Ամենայն Հայոց:—**Ժամանակը՝** 1869 թ.:—**Վայրը՝** ս. Էջմիածնի վանք:—**Ծանոթություն՝** սույն կոնդակը ստացված է ՆՎեր Հայրենիքում բնակվող մի բարեպաշտ անձից 1963 թ.:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—(Տպագիր—կարմիր գույնով)

Գէորգ Ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և կաթողիկոս Ամենայն Հայոց ծայրագոյն Պատրիարք համալգական նախասեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի. (ձեռագիր—սև գույնով) Մեծապատիւ և հայրենասէր աղայ Մկրտչի Տէր Մկրտչեանց՝ հարազատ որդւոյ Հայաստանեայց Առաքելական սուրբ եկեղեցւոյ՝ նուիրեմք ողջոյն Ցիսուսաանդ Աստուածային բազմապատիկ օրհնութեամբ:

Ընդ Աստուածային օրհնութեանս մերոյ և սիրոյ ողջունի ծանուցանեմք Ձերում Աստուածասիրութեան, զի քրիստոնավայել առաքինական գործովք Ձերովք յօգուտ ազգի մերոյ և եկեղեցւոյ՝ յընթացս կենաց Ձերոց ի բարեյաջողութեան և ի բարօրութեան վիճակի ոչ խնայելով Ձեր զջան և զկարողութիւն, յամենայն դէպս ձեռնտու հանդիսացեալ էք միշտ բարեաց ազգի մերոյ և պայծառութեան Սրբոյ Եկեղեցւոյ իբրև հարազատ որդի հաւատոյ Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին հոգւոց մերոց ըստ նահանջելի օրինակի երջանիկ նախնեացն Ձերոց, և հաղորդելով զբազումս կարօտաւորաց Ձերում Աստուածապարգև բարերարութեանց, արժանացեալ էք շնորհաց և օրհնութեանց նախնեացն մերոց արժանայիշատակ հայրապետաց, և վայելել զսէր հոգևոր հայրութեան նոցին յիշխանականդ Ձեր արժանայատուութեան ի ցոյց ջերմեռանդութեան ոգւոյ Ձեր առ Հայրապետական Աթոռս մեր Սուրբ Էջմիածին, և ի հոչակ ճշմարիտ ազգասիրութեան Ձերոյ:

Լուսեալ մեր զայս օրինակ հաւատիս բարեգործութեանց Ձերոց և քրիստոնէական առաքինութեան բարեպաշտութեան ոգւոյ, սեպուհ պարտաւորութիւն համարիմք մեզ յարգել միշտ զսուրբ աւանդ նախորդացն մերոց, որոց գահակալութիւն ի Տեառնէ աւանդեցաւ մեզ, և մերովս Հայրապետական օրհնութեան կոնդակաւ յայտնելով զուրախութիւն սրտի մերոյ և հայրականս սէր առ Ձեզ, խրախուսեմք և ևս զԱստուածասէր և զհարազատ որդիդ մեր ի տէր ի շաւիղ առաքինական գործոց բարութեան, ի նոյն ջերմեռանդութեան առ Սուրբ Եկեղեցիս ի տուրս բարեպաշտութեան և ի նոյն սեպհական Ձեզ ազգասիրութիւն իբրև ի պարտս բարեպաշտութեանդ:

Եւ ըստ որում մեք ըստ մերում պարտաւորութիւն յօրէ ամբառնալոյ ի գահակալութիւն Սուրբ Լուսաւորչին մերոյ՝ զանձն մեր եդեալ եմք յաշխատանս և ի (թ. 1բ) փոյթ շինութեան եկեղեցեաց և դպրոցաց ի լուսաւորութիւն մանկանց Եկեղեցւոյ; և յայսմ կարեկից և մասնակից է մեզ ազգ մեր տրովք բարեպաշտութեան ի բազում տեղեաց: Աղաչեմք զբարեգթութիւնն Աստուծոյ առաւելացուցանել յազգ մեր անձինս բարեպաշտ, և ի յաջողութեան և ի բարօրութեան կենաց պահել զՁեզ հանդերձ ամենայն տամբքք և զաւակօք յօգուտ Եկեղեցւոյ և ի ձեռնտութիւն ազգիս և ի յատուկ մխիթարութիւն մեզ:

Եւ յանձնելով զՁեզ և զԱստուածահաստատ գերդաստանս Ձեր շնորհաց և պահպանութեանն Աստուծոյ:

Մնամ միշտ վասն Ձեր աղօթարար,

Գէորգ Գ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Ի 27 Յունիսի յամի Տեառն 1869
և Ազգային ՌՅԺԸ,
ի սուրբ Էջմիածին:

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—Համար 201:
Թ. 1բ.—Վ. Ա. Ք. Գ.:

## № 268

## ՊԱՏԱՐԻԿՆԵՐ

### Ա. ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 1:—**Մեծությունը՝** 25.8×19.5 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** երկսյուն:—**Տողերը՝** Ա. սյունակը՝ 33, իսկ Բ. սյունակը՝ 32 տող:—**Գծումները** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** թերթի առաջին երեսը ներկայացնում է Քրիստոսի Հարությունը, 24.5×14.5 սմ. չափերով: Նկարի աջակողմյան ցույց է տրված բաց դագաղը, որի մեջ հրեվում է միայն պատանքը: Ցուղաբերից երեք կանայք խունկ են ծխում: Նկարի վերևում երևում են երեք հրեշտակներ: Նկարի վրա գրված է «Յարութիւն» բառը: Բավականի սիրուն մի նկար է սա: Սույն նկարից բացի կան նաև 4 հատ սիրուն լուսանցազարդեր, որոնք պատկանում են մի ուրիշ ձեռագրի, որտեղից կտրվել և սույն թերթի լուսանցքներին կպցվել են: Սրանցից երկուսը ծաղիկներ են, մեկը՝ խաչ, իսկ 4-րդն էլ՝ մի թռչուն մարդկային գլխով:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԶ—ԺԷ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** վեհափառ Հայրապետի միջոցավ 1961 թ. ստացված է ՆՎեր Ստամբուլից:

### Բ. ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 6:—**Գրակները՝** 1 հատ:—**Մեծությունը՝** 23×16.5 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտ մագաղաթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թերթերը՝** 1բ և 2ա:—**Տողերը՝** 21:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** պատադիկն ունի Մարկոս Ավետարանիչի մի սիրուն նկարը, ինչպես նաև գեղեցիկ մի խորան, մի գազանագիր, բազմաթիվ թռչնագրեր, լուսանցազարդեր և սրբեր:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԵ—ԺԶ դարեր:—**Վայրը՝** ան-

հայտ:—**Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետի միջոցավ 1961 թ. ստացված է նվեր Ստամբուլից:

Գ. ԺԱՄԱԳԻՐՔ

**Թերթերը՝** 2:—**Պրակները՝** 1 հատ:—**Մեծությունը՝** 22.5×17.4 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** 15:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** չունի, սակայն ամբողջական ձեռագրում եղել է:—**Գրիչը և ծաղկողը՝** Հակոբ ծաղկարար վարդապետ:—**Պատվիրատուն՝** Եվդոկիացի Պողոս վարդապետ:—**Ժամանակը՝** 1777—78 թթ.:—**Վայրը՝** Սեբաստիոյ Սուրբ Նշան վանք:—**Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետի միջոցավ 1961 թ. ստացված է նվեր Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ (գրված նոտրգրով)

Թ. 2բ.—Յիշատակարան:

Փառք անսկիզբն անեղէին, և անմահին, և անսահման էացուցչին, ի բոլոր էիցս հանցուք զօրհնութիւն և փառք քեզ արարիչ էհօլային:

Արդ աղաչեմ զամենեսեանդ աղերսագին պաղատանօք զլոյս երամիցդ՝ զգաղափարօղ և պատարագօղ սրբոյ մատենիս, աստուածատունկ հոգիաբողբոջ բուրաստանս, երկնահրաւէր գանձարանս, ոսկիաձոյլ աշտանակս, հոգիակեցուցիչ գանձս, յիշեցէք սրտի մտօք զնդոկիացի Պողոս վարդապետն, որ մեծաւ յուսով, և ինքնայօժար կամօք, և ջերմաջեր սիրով ցանկացաւ գրել ետուր զսայ Աստուածային մարգարիտս, զոր Տէր Աստուած բարեաւ վայելել տացէ ընդ երկայն աւուրքք ընդ երջանիկ առաքելոց և երանեալ հայրապետացն դասաւորեսցէ· ամէն:

Ի թուականութեան Պրկչին մերոյ, ՌԱՀԷՄՆ (1777 թ.), և մերում Հայոց թին ՈՄՆԷԻ (1778 թ.), ի ժամանակս առաջնորդութեանն, Սեբաստիոյ արեգակնափայլ Սուրբ Նշանի վանիցն, Տեառն Յակոբ արքեպիսկոպոսի գերադրական վարդապետի: Ծրեսը սայ ձեռամբ մեղսամած և անպիտան չընչին Յակոբ ծաղկարար վարդապետի:

Եւ դարձեալ երես անկեալ աղաչեմ և աղերսեմ, ով դաւաը սրբազանից, յիշեցէք յերկնագնաց յաղօթս ձեր զվերոյմակադրեալ քաջ վարդապետքն և զգծող սորին միով Հայր մեղայիւ, զոր Տէր Յիսուս զձեր յիշողացդ, և մեր յիշեցելոցս ողորմեսցի իւր միւս անգամ գալստեանն, ամէն:

Դ. ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 2:—**Մեծությունը՝** 20.8×14.6 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած, միջակ հաստությամբ թուղթ:—**Կազմը՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** վատ:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** 20:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** սույն երկու թերթերում կան երկուական հատ սիրուն թռչնագրեր և լուսանցազարդեր:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺՉ դար:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** սույն երկու թերթ պատառիկները դուրս են եկած վանքի № 49 ձեռագրի միջից, որ 17-րդ դարի Մարիամ գրչուհու կողմից գրված Գրիգոր Տաթևացու մի քարոզգիրք է:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 1ա.—№ 49 ձեռագրից:

ԺՉ (դար) Մ(ենրոպ) եպիսկոպոս:

Ե. ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 2:—**Մեծությունը՝** 18.5×15.5 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստարակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթերը՝** չունի:—**Տողերը՝** 19:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** սույն երկու թերթ պատառիկները, հանդիսանալով նույն ձեռագրի երկու Ավետարանների առաջին թերթերը, ունեն երկու խոշոր սիրուն գլուխներ, երկու սիրուն գազանագրեր, մի հատ մարդագիր և բազմաթիվ զարդագրեր ու թռչնագրեր: Կան նաև երկու լուսանցազարդեր և չորս հատ թռչուններ:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԶ—ԺԷ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետի միջոցավ 1961 թ. նվեր է ստացված Ստամբուլից:

Զ. ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 2:—**Մեծությունը՝** 16.3×11.8 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** 19:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** սույն երկու թերթ պատառիկները, հանդիսանալով նույն ձեռագրի երկու Ավետարանների սկզբի թերթերը, ունեն Ս. Մարկոս և Ս. Ղուկաս երկու ավետարանիչների շատ սիրուն նկարները, թերթի ամբողջական մեծության չափերով: Յուրաքանչյուր թերթի վրա գրված է ավետարանիչի անունը այսպես.—«Սբ. Մարկոս» և «Սբ. Ղուկաս»:—**Գրիչը՝** Գրիգոր կրոնավոր:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԵ—ԺԶ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետի միջոցավ 1961 թ. ստացված է նվեր Ստամբուլից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1բ.—Ով սրբազան ընթերցաւդ ..... քառանկիւն հոգիաբուխ վտակքս ի յարբուցումն ծարաւի և պապքեալ ոգոց մարդկան: Աղաչեմ զձեզ յիշել ի Տէր սրտի մտաւք զգծողս Գրիգոր սուտանուն կրաւնաւոր և զծնաւղսն իմ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 2բ.—Յիշատակ է Սուրբ Աւետարանս Տէր Յակոբին և ծնօղացն Տօլվաթիեայրին, և ծնող մօրն Փա-

շաճանին, և եղբարցն Աբրհամին և Յեղդկան, և կողակցին Թամամին, և միւս Թամամին, և Էրիցկնոչն Թուրվանտէ, և Գրիգորին, և Սարգսին, և Մարտիրոսին, և Ղազարին, և Պարոնին, և տանն ընտանեայցն ամենեցուն, և էառ իւր հալալ վաստակոցն: Ով որ զայս Սուրբ Աւետարանս ծախէ և յիշատակութենէ հանէ, զմասն Յուդային առցէ, զպատիժն Կայենի առցէ, ամէն օվ ընթերցող յիշեշչիք ի մաքրայփայլ յաղթս ձեր յիշեալ լիչիք ի Քրիստոսէ ամէն:

Գրեցաւ յիշատակարանս թվին ՌԺԽԶ-ին (1697 թ.), ամէն:

Է. ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 1 հատ:—**Մեծությունը՝** 17.2×12.2 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ մագաղաթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** 23:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** պատառիկն ունի մեկական հատ սիրուն զարդագիր և լուսանցազարդ:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԵ—ԺԶ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** ստացված է նվեր արտասահմանից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Մալկարացիների նվերից:

Ը. ՏՕՆԱՑՈՑՑ

**Թերթերը՝** 12:—**Պրակները՝** 1 հատ:—**Մեծությունը՝** 17.3×11.8×0.1 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած բարակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միապյուն:—**Դատարկ թղթերը՝** չունի:—**Տողերը՝** 21:—**Գծումները՝** առանց ճնշումի, աչքի չափով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** չունի:—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԷ—ԺԸ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** սույն պատառիկն ստացված է նվեր՝ Հայրենիքում բնակվող մի հավատացյալի կողմից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Ես անարժան գոլով էլ կարդացի այս Ս. Աւետարան Ս. Սև., Թ. Տ. Ա. 98 ամի 17 նոյեմբ. օր չորեքշաբ.:

Թ. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

**Թերթերը՝** 8:—**Պրակները՝** 1 հատ:—**Մեծությունը՝** 16.4×10.1×0.1 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած դիմացկուն թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** միապյուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա և 1բ:—**Տողերը՝** 18:—**Գծումները՝** առանց ճնշումի, աչքի չափով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** կա միայն մի հատ հասարակ թռչնագիր (թ. 2ա):—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** ԺԸ—ԺԹ դարեր:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** սույն պատառիկը նվեր է ստացված ԱՄՆ-ից Տիկին Երվանդուհի Ասատրյանի (Բրոնքս, ԱՄՆ) կողմից, №№ 166, 167 և 168 ձեռագրերի հետ:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.—Ստացված է նվեր Տիկին Երվանդուհի Ասատուրյանից №№ 166, 167, 168 ձեռագրերի հետ:

Ժ. ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 1 հատ:—**Մեծությունը՝** 10×15.4 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ:—**Կազմ՝** չունի:—**Պահպանակներ՝** չունի:—**Վիճակը՝** անբավարար:—**Գրությունը՝** միապյուն: — **Դատարկ թղթեր՝** չունի:—**Տողերը՝** ձեռագրինը հայտնի չէ, իսկ հիշատակարանը 7 տող է:—**Գծումները՝** աչքի չափով:—**Գիրը՝** նոտրգիր:—**Զարդագրություն՝** անհայտ:—**Գրիչը՝** Կարապետ սարկավագ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1804 թ.:—**Վայրը՝** Ս. Երուսաղեմի հայոց վանք:—**Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետի միջոցավ 1963 թ. նոյեմբեր ամսին ստացված է նվեր կահիրեաբնակ Արտաշես Գարտաշյանի կողմից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.—Յիշատակ է Սուրբ Աւետարանս այս ի քաղաքն Սրբոյն Երուսաղէմի, Սրբոյն Յակոբայ, Սրբոյն Աստուածածնայ և Սրբոյն Յարութեան, պաճի Կարապետ սարկաւագը յիշելին է:

Յիշեսջիր և մեզ առաջի անմահ գառին Աստուծոյ:

Գրեցաւ յամի Տեառն 1804 (ապա ջնջված է այս թիվը և գրված արաբական թվերով) ١٠٠٤ հայոց ՌՄԾԳ յուլիս 1-ին:

Թ. 1ա.—Ստացված է № 158 ձեռագրի հետ:

(Կանաչ թանաքով տպված է նվիրատուի անունը).

Հաւաքածոյ Արտաշէս Գարտաշեանի—Գահիրէ:

Թ. 1բ.—(Թերթի կոնակում նույն անունը և ազգանունը տպված են երկու անգամ):

№ 269

ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 280:—**Պրակները՝** 24, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակները Ա՝ 11 և ԻԴ՝ 5 թերթից են:—**Մեծությունը՝** 20.2×14.9×5.7 սմ.:—**Նյութը՝** դեղնած դիմացկուն թուղթ:—**Կազմը՝** կանաչ թավշապատ ստվարաթուղթ: Կազմի առջևում կպցված է Հիսուսի խաչելության մետաղյա քանդակը, իսկ չորս անկյուններում մեկական փոքրիկ զարդեր, իսկ կազմի կոնակում էլ մեջտեղը կարմիր քարով մի խաչ 7×6.2 սմ. չափերով:—**Պահպանակները՝** ձեռագրի վերջում կան երեք թերթ թուղթ:—**Վիճակը՝** լավ:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթերը՝** 71բ, 123ա, 123բ, 212բ, 277բ—280բ:—**Տողերը՝** 23:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրություն՝** ձեռագիրն ունի հասարակ զարդանկարչություն: Կան չորս հատ խորաններ (թ. թ. 1ա, 72ա, 124ա և 213ա), ինչպես նաև

բազմաթիվ լուսանցազարդեր և գմբեթներ, թռչնագրեր և զարդագրեր, թռչուններ, ծառեր և ծաղիկներ: Ձեռագրում կան երկուական հատ միացյալ թռչնագիր և մարդագիր (թ. թ. 78բ և 79ա) ու միացյալ թռչնագիր և ձկնագիր (թ. թ. 108բ և 226բ):—**Գրիչը՝** անհայտ:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1643—1654 թթ.:—**Վայրը՝** անհայտ:—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրը 1964 թ. նոյեմբերի 5-ին ստացված է նվեր Բուլղարիո Թոլբուխին քաղաքի հայոց Եկեղեցական վարչությունից, Բուլղարահայոց թեմական խորհրդի միջոցավ: Ձեռագիրը Հայաստան է բերված պր. Ժիրայր Սիմոնյանի միջոցավ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 71ա.—Գրեցաւ ՌՂԲ (1643) թվին:
Թ. 276ա.—Կատարեցաւ թվն. ՌՃԳ-ին (1654):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Կազմի առաջին երեսի կոնակում)
1654-ին գրուած:
№ 177.
Թ. 127բ.—Եւ դարձաւ ի տուն իւր:
Թ. 276բ.—Ցիշատակ է Սուրբ Աւետարանս ի դուռն Կուտուց Սուրբ անապատու Սրբոյ տաճարին Յոհաննու Կարապետին, որ ետ Պօթիշանցի Տէր Պետրոս սրբակրօն աւագ քահանայն վասն հոգւոց հանգուցեալ նախնեացն, և իւր յանցանացն թողութեան, ձեռամբ համեստակենցաղ և ճգնազգեաց Մարտիրոս վարդապետի, 1821 թուոջ...-ին ՌՄՀ, թղւում հայոց յունվարի մէկն, ի Փօթիշան:
Թ. 277ա.—Ստորագրողս Հմայեակ քահանայ Զարդարեան, Սեբաստիոյ նահանգէն, Տիվրիկ գիւղաքաղաքէն եմ ծնած 1886 ապրիլ 27-ին: Ասպարէզս ուսուցչութիւն էր: Աւարտած եմ Սեբաստիոյ Ամերիկեան ուսուցչանոցը (Normal School) 1907-ին: Պաշտօնավարած եմ ծննդավայրիս մէջ 2 տարի, 1 տարի Շապին Գարահիսարի մէջ, 8 տարի Կ. Պոլսոյ Պալաթի, Պէշիքթաշի և Կէտիկ փաշայի մէջ: 1922-ին գաղթական եկայ Վառնա, պարապեցայ սիկարի առուտուրով և 2 տարի ալ ուսուցչութեամբ, իբր տնօրէն: Հրաւիրուեցայ ռումէններու օրով Բազարճըգի (Տօպրիչի) հայոց Թաղական խորհուրդէն տեղւոյս ազգային Մամիկոնեան վարժարանին իբր տնօրէն-ուսուցիչ, 1933-ին: Տեղւոյս քահանան Ներսէս աւագ քահանայ Ղօնչէկիլեանը վախճանելով, ժողովուրդը քուէարկութեամբ զիս ընտրեց քահանայացու: Ձեռնադրուեցայ 1937 փետրուար 18-ին, Պուքրէշի Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյն մէջ ձեռամբ Տ. Տ. Յուսիկ արքեպիսկոպոս Ջօհրապեանի կողմէ Բազարճըգի հայոց Սուրբ Յովհաննէս Աւետարանիչ Եկեղեցւոյն վրայ: Հինգ տարի քահանայագործեցի առանց թոշակի, որովհետև Երիցուհիին հետ ես ալ ուսուցչական պաշտօն վարելով, բաւարար ամսական մը կ'ստանայինք:
Եկեղեցւոյն բոլոր զգեստները, գրքերը նորոգել տուի, ելէքտրականութիւն զետեղուեցաւ և Աստուծոյ տունը արժանի կերպարանք առաւ: Երբ 1940-ին, ռումէններու իշխանութիւնը վերցաւ, անոնց հետ և մեկնեցան 55 հայ ընտանիքներ Ռումանիա: Այժմ քաղաքը ունի 9700 տուն, 32.000 բնակչութեամբ, հայեր 120 տուն կը հաշուեն 450 հոգիով:
Հմայակ քահանայ Զարդարեան
15 Յուլիս 1943, Տօպրիչ:

№ 270

ԱՒԵՏԱՐԱՆ

**Թերթերը՝** 305 (304+Թ. 87ա):—**Պրակները՝** 27 հատ, յուրաքանչյուրը 12-ական թերթից, ի բաց առյալ հետևյալ պրակները՝ Ա՝ 5, ԻԶ (համարակալված Զ)՝ 8 և ԻԷ (Համարակալված Պ)՝ 2 թերթից են:—**Մեծությունը՝** 21.3×15×6.5 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած հատ թուղթ:—**Կազմը՝** կաշեպատ տախտակ, որի վրա ճնշումով զարդեր են նկարված երկու երեսներին: Ժամանակին գամերով կազմին են ամրացված բազմաթիվ խաչեր, որոնք հետագայում պոկվել ու հանվել են:—**Պահպանակները՝** վերջում կան երկու թերթ դեղնած և կեղտոտած հատ մագաղաթ:—**Վիճակը՝** բավարար:—**Գրությունը՝** երկսյուն:—**Դատարկ թղթերը՝** 1ա—բ, 2ա—բ, 3ա—բ, 140ա, 231ա, 301ա, 303ա—բ, 304ա—բ:—**Տողերը՝** 21:—**Գծումները՝** ճնշումով:—**Գիրը՝** բոլորգիր:—**Զարդագրությունը՝** ձեռագիրն ունի հատարակ զարդագրություն: Կան չորս ավետարանիչների նկարները ամբողջական էջի ծավալով (թ. թ. 6բ, 84բ, 140բ և 231բ) և չորս խորաններ (թ. թ. 7ա, 85ա, 141ա և 232ա): Ձեռագրում կան բազմաթիվ հատարակ լուսանցազարդեր և մարդագլուխ թռչուններ, ծառեր և ծաղիկներ, խաչեր և զարդեր, թռչուններ և մի հատ էլ օձ: Կան բազմաթիվ հատարակ մարդագրեր, զարդագրեր և թռչնագրեր:—**Գրիչը՝** Պետրոս դպիր:—**Պատվիրատուն՝** անհայտ:—**Ծաղկողը՝** անհայտ:—**Ժամանակը՝** 1659 թ.:—**Վայրը՝** Զիլա գյուղաքաղաքի ս. Հակոբ վանք:—**Ծանոթություն՝** սույն ձեռագիրը 1964 թ. նոյեմբերի 5-ին ստացված է նվեր Բուլղարիո Թոլբուխին քաղաքի հայոց Եկեղեցական վարչությունից, բուլղարահայոց թեմական խորհրդի միջոցավ: Ձեռագիրը Հայաստան է բերված պրն. Ժիրայր Սիմոնյանի միջոցավ:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 297ա.—Փառք անեղ բանին Աստուծոյ երից միում կատարեալ առանձնաւորութեամբ և միաւորութեամբ ըստ աստուածութեան եռահրաշ անբաժանելի միասնական Սուրբ Երրորդութեան կրկնեալ փառք ի գոյից բնաւից յիմանաելեաց և իս գալեաց ամէն գրեցաւ Սուրբ Աւետարանս թվին ՌՃ և ութին ի գիւղաքաղաքն Զիլայ, ի դուռն Սուրբ Յակոբայ: Արդ աղաչեմ սուրբ հանդիպողքդ տեսութեամբ կարդալով կամ աւրինակելով յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զանպիտան մեղաւք լցեալ Պետրոս անուն դպիրս որ անուամբս եմ կոչեցեալ և գործովս եմ հեռացեալ: Դարձեալ յիշեցէք ի յաղաւթս ձեր զծնաւղս իմ զՏէր Խաչատուր քահանայն և զմայրն իմ զԳե-

ղեցիկն երեցկին, և զեղբայրն իմ զՄարտիրոսն և հաւրեղբայրն իմ զմամտեսի Վարդերեսն որ առ Աստուած փոխեալ է ձեր յիշողացս ողորմեսցի և մեզ հայր մեր որ:

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի կազմի Ա. երեսի կունակում)

1659-ին գրված:

Իջպու հին Եկեղեցական Վարչութիւն.

(Կա Եկեղեցական Վարչության անընթեռնելի կլոր կնիքը):

Թ. 1ա.—№ 178 և նախորդ էջի կլոր կնիքը:

Թ. թ. 83բ—84ա.—Այստեղ կա նախորդ ձեռագրի թ. թ. 277ա-ում նշված հիշատակագրությունը, գրված Հմայակ քահանա Զարդարյանի ձեռամբ, միայն հետեվյալ երկու ավելացումներով:

Թ. 83բ.—...1922-ին գաղթական եկայ վառնա, պարապեցայ սիկարի առևտուրով և 2 տարի ալ ուսուցչութեամբ, իբր տնօրէն (ավելացվել են հետևյալ վեց բառերը) Վառնայի «Սիսակեան» ազգային երկսեռ վարժարանի մէջ:

Թ. 84ա.—(Ստորագրությունից առաջ գրված է) Հոգևոր հովիւ Տօպրիչի հայոց:

Թ. 297բ.—(Հիշատակարանի շարունակությանը գրված է)

Այլ և աւրհնեսցէ զձեզ Տէր Աստուած մեր որպէս աւրհնեաց գլխաւոր արարածքն երկինք երկնայնօք և զերկիրս երկրայնօք զծովն ծովայնօք յօդն յօդայնաւք զհրեշտակ և զմարդիկ աւրհնեաց նոյն աւրհնութիւն աստուածային եկեսցէ և հանգիցէ ի վերայ ձեզ իբրև զցաւղ գարնանային և զճառագայթս արեգական ըստ մարգարէին զգանուկ և զանագան ի նստել ի տան, ի գնալ ի ճանապարհի, ի ննջել, և ի յառնել, ի առ և ի տուր, ի գնել և ի վաճառել, ի յել և ի մուտ, և ամենայն ինչ որ ձեռամբն է ընդ Քրիստոսի աւրհնութեամբն եղիցի ամէն:

Հոգին Աստուած անեղն էութեամբ շրջեսցի ի վերայ ձեզ և բաշխեսցէ զպարգևս իւր անապական և է և եղիցի ամէն: Կենդանի և կենդանի և կենդանաբարն կենդանութեամբ պահեսցէ զձեզ հանդերձ ննջեցելովք ձերովք ի յաջակողմեան դասուն և քուսուցէ ի յօրն վերջին ամէն:

Թ. 298ա.—Աստուած ողորմի կնկահար Յակոբին Աստուած լուսաւորէ իւր ծնողացն հոգոյն և պաճառ եղաւ այս Աւետարանիս, պաճառ եղաւ առնելոյ ամենք ասէք տվաւ Գ. ղոշ. Աստուած ողորմի ամէն:

Աստուած ողորմի քէջեցի Խաչատուրի ծնողացն հոգոյն տվէր է յԱւետարանի յիշատակ Բ. ղուռուշ Աստուած ողորմի:

Աստուած ողորմի Ազատի որդի Աւաքին ծնողացն հոգոյն, տվէր յԱւետարանին Ա. ղոիշ:

Աստուած ողորմի զիլէցի խոճայ Անդրեասին ծնողացն հոգոյն, տվէր է Աւետարանի Ա. ղուռիշ:

Աստուած ողորմի զիլէցի Մանուկին ծնողացն հոգոյն, տվէր է Աւետարանի յիշատակ Ա. ղոիշ:

Աստուած ողորմի ճիզմէճի Պետրոսի հօն հոգոյն, տվէր յիշատակ Ա. ղոիշ:

Աստուած ողորմի Սագսիս հաւրն հոգոյն, տվէր է. յիշատակ Աւետարանին Ա. ղոիշ:

Աստուած ողորմի յԵսայինն ծնողացն հոգոյն, տվէր Աւէտարանին յիշատակ Ա ղուռուշ Աստուած ողորմի:

Աստուած ողորմի Կարապետին որդին Կիրակոսին իւր ծնողացն տվէր է յիշատակ Ա. ղոշ.:

Աստուած ողորմի փուրուղլու Սարգիսի հօր հոգոյն, տվէր է յԱւետարանին յիշատակ Ա. ղուռուշ:

Թ. 298բ.—Աստուած ողորմի ամասիացի խոճայ Միրաքին հաւրն և իւր ծնողաց հոգոյն, տվէր է Սուրբ Աւէտարանին յիշատակ Ա. ղուռուշ:

Աստուած ողորմի հալէպցի խոճայ Մովսէսին հաւրընն և իւր ծնողաց հոգոյն տվէր է Սուրբ Աւետարանին Ա. ղուռուշ յիշատակ:

Աստուած ողորմի վահրվացի խոճայ Մէսրոբին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւետարանին Ա. զուլութայ յիշատակ Աստուած ողորմի:

Աստուած ողորմի ակէրկէցի Մարտիրոս տիրացուին ծնողացն հոգոյն տվէր է յԱւետարանին կէս ղուռուշ:

Աստուած ողորմի ակէրկէցի Ղազարին հաւրն հոգոյն տվէր է Սուրբ յԱւետարանին, յիշատակ կէս ղոիշ:

Աստուած ողորմի խոճայ Զաքարին ծնաւղացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւետարանի յիշատակ կէս ղուռուշ:

Աստուած ողորմի աճէմ խոճայ Հարապետին հօրն ծնողացն հոգոյն տվէր է Աւետարանին կէս ղուռուշ:

Աստուած ողորմի ամասացի խոճայ Եղիպային ծնողացն հոգոյն տվէր է յԱւետարան յիշատակ կէս ղուռուշ:

Թ. 299ա.—Աստուած ողորմի ամասացի Ցարութէնին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւէտարանին յիշատակ Գ. թիմին:

Աստուած ողորմի դաշտեցի խոճայ Մէսրոբին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւէտարանին յիշատակ կէս ղուռուշ:

Աստուած ողորմի Էթարին ծնողացն հօրն և մաւրն հոգոյն տվէր է Սուրբ յԱւետարանին յիշատակ Գ. էուռուպ:

Աստուած ողորմի գաւառնացի Մարթային հօրն և ծնաւղացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւէտարանին յիշատակ կէս ղուռուշ:

Աստուած ողորմի .յԱխիճանի դստէրն Վարդխաթունին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւէտարանին յիշատակ կէս ղուռուշ:

Աստուած ողորմի գաւառնացի Աննային ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւէտարանին յիշատակ Բ. թիմին:

Աստուած ողորմի վահրայվացի Պետրոսին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւէտարանին յիշատակ կէս ղուռուշ:

Աստուած ողորմի մեղրեցի Յովանէսին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւէտարանին Ա. էուռուպ:

Աստուած ողորմի վահրավացի Ղազարին ծնողացն

հոգոյն տվէր Սուրբ յԱւէտարանին յիշատակ Բ. թիմին:

Աստուած ողորմի կարճիվանցի Հախվէրտին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւէտարանին յիշատակ Ա. Էռուպ:

Աստուած ողորմի կարճիվանցի Յոհանին ծնողացն հոգոյն տվէր է սուրբ յԱւէտարանին յիշատակ Ա. Էռուպ:

Աստուած ողորմի գետնենեցի Յունանին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւէտարանին Բ. թիմին:

Թ. 299բ.—Աստուած ողորմի գիլէցի մեղտէսի վարդէրեսին իւր հոգոյն և իւր ծնողացն տվէր է Սուրբ Աւէտարանին Բ. ղոռուշ յիշատակ:

Աստուած ողորմի գիլէցի Գիրիգորին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւէտարանին յիշատակ Ա. Էռուպ:

Աստուած ողորմի գիլէցի Ղազար տիրացուին ծնողացն հոգոյն տվէր է յիշատակ Սուրբ յԱւէտարանին Ա. Էռուպ:

Աստուած ողորմի մարսէվանցի Պետրոսին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւէտարանին յիշատակ Ա. Էռուպ:

Աստուած ողորմի մեղրեցի Սարգիսի որդի Յոհանին ծնողացն հոգոյն տվէր է յԱւէտարանին յիշատակ Ա. Էռուպ:

Աստուած ողորմի մեղրեցի Յովանէսին ծնողացն հոգոյն տվէր է Սուրբ յԱւէտարանին յիշատակ ղոռիշ:

Աստուած ողորմի քուրուղլու Սարգիսին հաւրն Հիւրմուզին հոգոյն Սուրբ Աւէտարանին վրայ յիշատակ դրէր Սուրբ Խաչն Աստուած աւրհնէ յիշատակ:

Աստուած ողորմի կուրսեցի Կիրակոսն տվեր իւր տղին հոգուն մէկ պասմայ շապիկ:

Աստուած ողորմի կետնանեցի Պէտրոսի որդի Աղայճանին տվաւ Սուրբ յԱւէտարանին մէկ թուլթ:

Թ. 300ա.—Աստուած ողորմի Տէր Ովանէսի յիրիձկընընն տվաւ յիշատակ մէկ խկի դաբախ մի:

Աստուած ողորմի վահրահվացի Մինասին և իւր ծնողացն մահտէսի Ծատուրին տվէր է Սուրբ յԱւէտարանին յիշատակ մէկ դազան, մէկ վարագուր, մէկ յաղի տիպէկ, Աստուած օղորմի:

(Գրվել սակայն հետագայում ջնջվել է.—

Աստուած ողորմի քարէցի Տէվրանի յորդի Մէսէսընն տվէր է յիշատակ մէկ լէկէն, մէկ յիպրուղ, Աստուած օղորմի):

Աստուած ողորմի դալբախճի Սարգիսին ծնողացն տվէր է յիշատակ Սուրբ յԱւէտարանին մէկ խորհիուրդատ տէտր մի Աստուած օղորմի:

Աստուած ողորմի Փիրիճան հորն հոգուն տվէր է իշատակ մէկ էպր յուղ, կէս յԱւէտարան, Աստուած օղորմի:

(Այս տողերը առնված են շրջանակի մեջ.—

Աստուած ողորմի Տէր Սարգիսի յորդի Զագարն տվէր է յիշատակ կէս յԱւէտարան հորու հոգուն):

Աստուած ողորմի մէղրեցի Նուպարի որդի Փիլիպոսին ծնողացն տվէր է յիշատակ մէկ լէկէն, մէկ իպրիխ:

Աստուած օղորմի Տվլէդին հորն տվէր է մէկ շապիք:

Աստուած օղորմի վարհվառայցի պարոն Ունանին հորն և մորն հոգուն տվաւ Սուրբ յԱւէտարան յիշատակ մէկ ճաշոց քիրք:

Թ. 300բ.—Աստուած օղորմի Տէվլէ հորն և մորն հոգուն տվէր է յիշատակ մէկ շապիք, մէկ չադիի, Աստուած օղորմի:

Աստուած օղորմի Սինամիրի հոգուն տվէր է մէկ խաչ:

Աստուած օղորմի յազիճ Ղազարին ծնողացն տվէր է յիշատակ մէկ շարական մէկ ժամայքիրք:

Աստուած օղորմի դաշտէնեցի Յարութիւնին հոգուն տվէր է յիշատակ մէկ ժամայքիրք Տէրին:

Աստուած յողորմի վահրավեցի Յովանիսին պարոն Հարօնին ծնողացընն տվաւ հաճի օղլու Պազարճուք յիշատակ մէկ յայսմաւուրք Աստուած օղորմի:

Աստուած յողորմի Սողմոնի հորն և մորն հոգուն տվէր է յիշատակ մէկ շապիք Սուրբ յԱւէտարանի:

Աստուած ողորմի կուրասեցի Ղազարին կամ Նազարին, իւր որդոցն ձենողացն հոգուն դուաւ յիշատակ Սուրբ Աստուածածին Աւետարանին Ա. լաւ ատենի, Աստուած ողորմի:

Աստուած ողորմի Գիրգորի որդի Թորոսին մորն...

Աստուած ողորմի վառնացի Գասպարին հորն...

Թ. 301բ.—Պատճառ գրոյս այս է թվին ՌՄԻԳ (1774) որ Մոսքովն մեզ եբեր Իսմաիլ ես պազարճուխցի քուրք Վարդանէսի որդի Ապրահամըս այս Սուրբ Կարմիր յԱւետարանս Մոսքովի ձերքեն առի վասն իմոյ անձին յիշատակ և ծնողաց իմոց որ յիշատ(ակ) լից այս են, անուվանքն որ ըն(թ. 302ա)-դերձողքն յիշեն այս հոգիք են նախ զհայրն իմ Վարդանիս, մայրս Մանուշակ, Նահապետն, Յովաննեսն, չալբբ ողլու Ապրահամ, Խաչատուրն, Գրիգորն, մահտեսի Գասպարն և համայն կենդենդանիքն իմ և հանգուցեալքն յիշողքն յիշեալ լիցի ի Քրիստոս, Ամեն:

Թ. 302բ.—ՌԸՀին ես Տէր Կարապետ անարժան և մեղօք զառաձեալ ծառայս Քրիստոսի եկա յայս հքը օղլու Բազարճըխ գիւղիս քահանայագործութեան և տեսի տգիտութիւն և անկարգութիւն տղայոց յանձն առի կամաւ փոքր ի շատէն ըստ կարեացս աշխատիլ և յառաջ բերել մայրենական լեզուս մեր ձրիաբար և մատակարարիչն Հոգին Սուրբ ոչ ի թերեվս եհան զաշխատութիւնս մեր, ի լրման երկու տարուս առ հասարակ մանկունք սկսան հայերեն խոսակցութեան և տեղեկանալ Աստուածային Սուրբ Գրոց. խնդրեմ ձեզմէ ով բարէսիրտ ընդերցողք պաղատելով խնդրեցեք ի Տեառնէ թողութիւն անասելի մեղացն իմ, և յիշեցեք զիս և զննջեցեալ հայրն իմ Վարդանեսն և մայրն իմ Նազլուն և երեցկինն իմ Եղիսաբէթն, և քոյրն իմ Աննան, և դուստրն իմ Սըրբուհին, և համայն ննջեցեալքս զի և դուք յիշեալք լիջիք ի բարերար Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ Ամէն:

(Շարունակելի)